նում է ցուրտ աշնանը կամ ձմեռը։ Այս ժամանակ է, որ ճանապարհնե-րըն էլ կոշտանում են. անձրևներ գա-լուց կամ ձիւն գալուց և հալչելուց յե-տոյ՝ ամառուայ ճանապարհների վրայ դիզուած հողը ցեխ է դառնում և մի ցուրտ գիշեր սառչելով կոշտ կոշտ մը-նում է։ Ահա ցուրտ աշնան կամ ձը-մեռուայ նկարագիր գեղի և ճանա-պարհի պատկերով։ Բայց խաղի բուն իմաստը հասկանալու համար այդքանը դեռ բաւական չէ։ Պէտք է իմանալ, որ ցուրտ աշնանը կամ ձմեռն են աղ-ջիկ ուզում և հարսանիք անում։ Այժմ երևակայենք մի աղջիկ, որին շատ ու-զողներ կան, բայց ինքն ուրիշին է սի-րում։ Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա աո ու դողի մէջ է, թէ մի գուցէ իրեն ստիպեն ուրիշի և ոչ իր սիրելիին մարդու գնալ։ Նա դուրս է գալիս, նայում շուրջը հեշտացած Արաքին ու կոշտացած ճանապարհներին և իւր լցուած սիրտը գեղում երգով.

Խարար տարէք իմ եարին,—
Մուշտարիս շատացել ա»։

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ՄՈՍԿՈՒԱ, տ. Մ. Մխանսարեանին.—«Մուրճ»-ի 1 օր. ուղարկւում է Յովնաննեան դպրոցին։

ԹԻՖԼԻՍ, պ. Գր. Արաֆելովին.—«Մուրճ»-ի 1 օր. ուղարկւում է Թիֆլ. էժան. գրադարանին։

ԹԻՖԼԻՍ, պ. Գ. Տէր-Մարգարեանին.—«Մուրճ»-ի 1 օրինակ ու-ղարկւում է Դաղմաղալինեան դպրոցին։

ՄՈՍԿՈՒԱ, պ. Ռ. Գէորգեանին.—«Մուրճ».ի 1 օր. ուղարկւում է Քաղաքի գիւղի համայնքին։

ՊՐՈՎԻԴԱՆՍ, Ազգ. Գրադ. վարչութեան.— Կանոնաւորապէս ուղար-կում ենք ձեզ բոլոր համարները. եթէ ձեզ չեն հասել №№ 1 և 11, մեղը մերը չէ. կրկին ուղարկեցինք № 11, իսկ № 1 սպառուած է։

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՈԼ, Ա. Տ.-Ա.— Թարգմանութիւններից արուած թարգ-մանութիւնները մենք սովորաբար չենք տպում. պէտք է բը-նագրից թարգմանել։

ՑԻՒՐԻԽ, պ. Առանձարին.—Բագուից ոչ մի պատասխան։ № 1 կրկին ուղարկեցինք։

ՇՈՒՇԻ, պ. Պ. Ջ.—Անցեալ տարւայ ոչ միայն № 1, այլեւ №№ 2, 3, 4, 11 եւ 12 սպառուած են, եւ մենք էլ պատրաստ ենք յետ գնելու։ Եթէ մեզ վերադարձնողներ լինեն, ի նկատի կ'ունե-նանք եւ ձեր խնդիրքը։

ԼՆԻԱՇԻ, բժ. Ա. Մ.—Մնաց յաջորդ համարին։

—

Ի գիտութիւն հեղինակների՝ խմբագրութիւնս յայտ-նում է, որ մինչև 1903 թւականի դեկտեմբեր ամիսը լոյս չտեսած ձեռագրները ոչնչացրուած են։ Ցանկա-լի է, որ մեր ինքնուրոյն գրողները հետևէին peu de mots, beaucoup d'idées սկզբունքին...

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Անցեալ համարում

երես	*տող*	*տպուած է*	*պէտք է լինի*
140	20 վ.	*միլտիա*	*միլտիու*
146	14 ն.	*nace*	*Na Cl*
149	12 վ.	*բուսաբանութեան*	*բուսաբուծութեան*
174	7 »	*մանաանդ*	*Մանանայ*
208	1 ն.	*հասակութեան*	*հասաբակութեան*
188	3 »	*wiwendi*	*vivendi*
231	21 վ.	*ամենաթանգագին*	*ամենաթանդ*
229	3 ն.	*Բեկլիս*	*Բեկլիու*
		Այս համարում	
96	2 ն.	*Neitzsche*	*Nietzsche*
98	18 վ.	*երգերն*	*երկերն*
»	12 ն.	*զատագոմները*	*Ջատագոմները*
100	22 վ.	*Նիցշէնի*	*Նիցշէի*

ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Կրկին տպագրութեամբ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. հատորի Ա. գիրքը բաղկացած 50 քառածալ թերթերէ, 400 էջէ, զարդարուած յատուկ խնամքով տպուած բազմաթիւ պատկերներով։ Թէև խոստացած էինք շարունակել Բ հատորի տպագրութիւնը և Ա. հատորը կրկին տպագրել յետոյ, սակայն բազմաթիւ նոր բաժանորդներու դիմումներն մեզ ստիպեցին փութացնել Ա. հատորի կրկին տպագրութիւնն։ Կը փութանք յայտնելու միանգամայն, թէ Բ հատորի Ա. գրքի տպագրութիւնն ևս սկսած ենք շարունակել և պիտի ջանանք 4—5 ամիսէն աւարտել ու ղրկել բաժանորդներու։

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՑՊՍԲԱՆԻ

Բաժանորդագրութիւնը դեռ կը շարունակուի։ Ուրաքանչիւր հատորի բաժնեգինն է 15 ֆրանկ = 6 ռուբլի = 3 տոլար։

Հասցէ IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare VENISE (Italie)